

Թողնել և միայն զդուշանայ, որ նրանք վայր ընկնելու վր-
տանգիդ ազատ լինին. նրանց ձեռքից պէտք է առնել այն ա-
մենը, ինչ որ կարող է վնասել նրանց:

167. Այն երեխան, որի մարմինն ու ձեռքերն ազատ են,
անշուշտ աւելի քիչ լաց կլինի, քան թէ բարուրի մէջ կապ-
կըպուածը: Միայն ֆիզիքական կարիքներ զգացողը լաց է լինում
միայն այն ժամանակ, երբ որեւէ ցաւ է զգում: այս մեծ առաւելու-
թիւն է, որովհետեւ ճշտութեամբ կարող ենք իմանալ, թէ երբ
օգնութեան կարիք ունի երեխան. այդ դէպքում ոչ մի վաշտ-
կեան իրաւունք չունինք այդ օգնութիւնից զրկել նրան: Իսկ
եթէ չես կարող երեխայի ցաւը թեթեւացնել, հանգիստ մնա
և մի շողորորթի նրան՝ հանգստացնելու մաքով. գգուանքը
չի կարող նրա մարմնի ցաւերը բժշկել, ընդհակառակը նա կը-
նկատէ՝ թէ ի՞նչ պէտքէ անէ, որպէսզի իրեն գգուեն և եթէ
մի անգամ մինչև այնտեղ հասցրեց, որ դու նրա ցանկութիւնը
կատարեցիր, այդ նշանակում է, որ նա իշխում է քիչ վրայ
և արդէն ամեն բան կորած է:

168. Եթէ երեխաներին աւելի ազատութիւն տանք շար-
ժողութիւններ անելու, աւելի քիչ լաց կլինեն. եթէ նրանց
արտօսանքից աւելի քիչ ձանձրանանք, աւելի քիչ կչարխարու-
ենք նրանց հանգստացնելու համար. եթէ նրանց այնպէս յա-
ճախ չը սպառնանք կամ չը շողորորթենք, աւելի պակաս երկո-
չոտ կամ անվախ կլինեն և աւելի լաւ կպահպանեն իրենց բը-
նական յատկութիւնը: Նրանց լռեցնելու համար աշխատելիս
աւելի շուտ կարող ենք նրանց մարմնին որևէ վնաս պատճա-
ռել, քան եթէ թողնէինք, որ աղաղակեն. անփոյթ թողնուած
երեխաներն աւելի պակաս են այդ վտանգին ենթարկուած, քան
թէ միւսները: Դրանով երբէք չեմ ուզում ասել թէ երեխա-
ներին պէտք է անխամ թողնել, ընդհակառակը մեծ նշանա-
կութիւն կունենայ եթէ նրանց օգնենք և նրանց կարիքներն
իմանանք նրանց աղաղակից առաջ: Բայց չեմ ցանկանում նոյն-
պէս, որ սխալ հասկացողութեամբ խնամենք նրանց: Ինչո՞ւ
չպէտքէ լաց լինին երեխաները, երբ տեսնում են, որ իրենց
արտօսանքը շատ բան են շինում: Նրանք գիտեն թէ ի՞նչ
արժէք են տալիս նրանց լռելուն և օգուտ են քաղում այդ
հանգամանքից: Վերջը նրանք ա՛յնքան թանկ են գնահատում
իրենց լռութիւնը, որ այլևս անհնար է լինում վճարելը և
յետոյ երբ երկար ժամանակ աղաղակում են առանց

սպասած հետեանքին հասնելու, վերջին ճիգն են թափում, ուստի սպառում և ֆեասում:

169. Այն երեխայի երկար աղաղակը, որ ոչ կապկպուած է, ոչ հիւանդ և որից ոչինչ չենք պակասեցնում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ սովորութիւն և յամառութիւն: Այդտեղ բնութիւնը չէ յանցաւորը, այլ դայեակը, որ երեխայի տաղտկալի աղաղակը չկարողանալով տանել, աւելի ևս սաստկացնում է այն առանց մտածելու, որ այսօր այդպէս յոնցնելով՝ գրգռում է նրան որ վաղն աւելի ևս աղաղակէ:

170. Այդ սովորութիւնից ձեռք վերցնելու կամ թէ դրա առաջն թռնելու միակ միջոցը՝ վրան ուշադրութիւն չդարձնելն է: Ոչ որ, նոյն իսկ երեխաները, չեն ուղղում իրար ջանք թափել: Նրանք յամառ կերպով փորձեր են անում, բայց եթէ քո հաստատամտութիւնը գերազանցէ նրանց յամառութեանը՝ նրանք ձեռք կ'վերցնեն և երբէք չեն կրկնի: Այս կերպ կազատենք ներանց արտասուք թափելուց և կսովորեցնենք, որ լաց լինեն միայն այն ժամանակ՝ երբ ցաւը ստիպում է:

171 Սակայն և այնպէս՝ եթէ նրանք լաց են լինում քրմահաճութիւնից կամ յամառութիւնից, աւելի ապահով միջոց կայ նրանց յետ սովորեցնելու, պէտք է մի որեւէ հաճելի և աչքի ընկնող առարկայով զբաղեցնել նրանց, այդ զբաղմունքի ժամանակ նրանք կ'մոռանան, որ պէտք լաց լինէին. դայեակներ լինելով մեծամասնութիւնը շատ լաւ դիտէ այդ արուեստը և եթէ ճշտութեամբ գործադրուի, շատ օգտակար է: Բայց շատ մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ երեխան չնկատէ թէ այդ անում են իր ուշադրութիւնը ցրուելու դիտարութեամբ: Նա այնպէս պէտք է զբաղուի, որ չկարծէ՝ թէ ուրիշները մտածում են այդ մասին: Բայց այս բանում բոլոր դայեակներն էլ անշնորհք են:

172. Երեխաներին շատ շուտ են կաթից կտրում: Ծրծից կտրելու ժամանակը ցոյց է տրւում ատամների դուրս գալով. ատամների դուրս գալը սովորաբար անհանգստացնում և ցաւ է պատճառում: Այդ միջոցին երեխան անգիտակցական բերանական ձգտումով ամեն բան, ինչ որ ձեռքն է ընկնում, բերանն է տանում շարունակ ծամելու: Երեխայի այդ գործը թեթեւացնելու մտքով իբրև խաղալիք նրա ձեռքն են առնում որեւէ պինդ մարմին, օրինակ փղոսկր կամ յղկիչ ատամներով կարծիքով այդ սխալ բան է: Պինդ մարմինները լնդերի վրայ սեղ-

մուկելով, ամենևին՝ չեն փափկացնում, այլ ընդհակառակը՝ կոշտացնում, պնդացնում են ընդերքը և հետեանքն՝ այն է լինում, որ ատամների դուրս գալն աւելի մեծ չարչարանքով ու ցաւով է տեղի ունենում, Իրրե օրինակ միշտ պէտք է ի նկատի ունենանք բնագոյումը։ Շան յակոտներն իրենց նոր դուրս եկող ատամները չեն վարժեցնում կոպճաբարի, երկաթիկամ ոսկորների վրայ, այլ ընդհակառակը, փայտի, կաշուի, շորի կտորտանքի և փափուկ նիւթերի վրայ, որոնք սեղմւում են և որոնց մէջ ատամը կարող է ներս մտնել։

173. Ամեն բան պէտք է պարզ լինի, արծաթեայ բոժոժները, ոսկի և բուստ, յղկուած բիւրեղ, ամեն տեսակի և գնի ճշանակներն անպէտք և վտանգաւոր գործիքներ են, Դէն ձգեցէք բոլորը, Դէն ձգեցէք բոժոժներն ու ճշանակները, կարճ ոստերն իրենց պտուղներով և տերեւներով, խաշխաշը, որի միջի սերմերը շարժուելով՝ ձայն են հանում, մատուտակի ձողը՝ ծծելու և ծամելու համար, նրան նոյնչափ զուարճութիւն կպատճառեն, որչափ այն փառաւոր սնոտի պաճուճանքները, առանց նրանց փնասակարկողմն ունենալու, երեխայը շոյալուծութան չեն սովորի։

174. Կաթից և ալիւրից զանգուած խիւսը չէ համարւում շատ առողջարար սնունդ։ Եփած կաթը և անեփ ալիւրը շատ նեղութիւն են պատճառում մեղ և փնասում ստամոքսը։ Այդ խիւսի ալիւրն աւելի քիչ է եփուած, քան հացինը և բացի դրանից, խմորուած էլ չէ, աւելի օգտակար եմ համարում և առաջարկում հացաջուրը և բրնձալորձիւնը։ Եթէ ուզում ենք անպատճառ կաթի և ալիւրի խիւս պատրաստել, աւելի լաւ կլինի, որ ալիւրը նախապէս մի փոքր բովենք։ Մեր տանն այդպիսի բոված ալիւրից շատ համեղ և առողջարար ապուր են պատրաստում։ Մօից և բանջարից պատրաստուած արգանակը նոյնպէս առանձին սնունդ չէ տալիս և պէտք է ըստ կարելոյն քիչ գործածել։ Երեխաներն իսկոյն պէտք է ծամել սովորեն, ատամների դուրս գալը թեթեւացնելու ամենալաւ միջոցն այդ է, երբ նրանք սկսում են կուլ տալ, կերակրի նիւթերի հետ խառնուած լորձիւնի հիւթը հեշտացնում է մարսողութիւնը։

175. Ամենից առաջ ես նրանց չոր պտուղներ և հացի կեղև կտայի ծամելու Խաղալու համար կտայի չոր հացի փոքրիկ շերտեր և պիեմօնտի հացի նման չոր թուխ, որին նրանք grisse են կոչում։ Այս հացը նրանք այնքան ժամանակ բերա-

նում կփափկացնեն, մինչև որ վերջապէս մի կտոր կուլ կտան. միանգամից ասամբները դուրս կգան և նրանք կաթից կը կտրուեն, համարեա թէ նախ քան այդ նկատելը Գիւղացիք սովորաբար շատ լաւ ստամոքս ունին և երեխային կաթից կտրելիս առանձին ձեականութիւններէ էլ չեն գիմոււմ:

176. Ծնուելու օրից արդէն երեխաները լսում են ուրիշների խօսակցութիւնը. նրանց հետ խօսում են ո՛չ թէ միայն նրանց հասկանալուց առաջ, այլև նախ քան նրանք կարողանային իրենց լսած հնչիւնները կրկնել. նրանց դեռ ևս դժուարադարձ լեզուի գործարանները միայն աստիճանաբար են յարմարուում իրենց լսած հնչիւնները նմանութեամբ արտասանելու. մինչև անգամ դեռ յայտնի էլ չէ, թէ արդեօք այդ հնչիւնները նրանց ականջի համար նոյնչափ պարզ զգալի են, որչափ մեր ականջի համար. Ես հակառակ չեմ, որ դայեակը երգերով և զանազան ուրախ եղանակներով երեխային զուարճացնէ, բայց հակառակ եմ, որ անդադար խլացնեն նրա ականջը անօգուտ խօսքերի հեղեղով, որից նա ոչինչ չէ հասկանում, բացի այն շեշտից, որով այդ խօսքերն արտասանուում են. Երեխաների լսողութեան համար հնչուած առաջին բառերը պետք է լինին հասկանալի, պարզ և յաճախ պէտք է կրկնուին, իսկ դրանից կազմուած խօսքերը պէտք է վերաբերուեն այն առարկաներին, որ կարելի է նախապէս գոյց տալ երեխային. Անհասկանալի բառեր արտասանելու տարաբաղդ հմտութիւնն աւելի վաղ են ձեռք բերում երեխաները, քան թէ կարծում ենք: Աշակերտը դասարանում լսում է ուսուցչի շատախօսութիւնը, ինչպէս որ բարուրի մէջ լսելէր դայեակի բարբառանքը. Իմ կարծիքով շատ օգտակար հրահանգ կլինէր՝ եթէ այնպէս անէին, որ երեխաները ոչինչ չհասկանային այդ խօսակցութիւններից:

177. Եթէ մարդ ուզենայ զբաղուել մանուկների լեզուի և առաջին խօսքերի կազմութեամբ, մեծ քանակութեամբ դիտողութիւններ կունենայ. Ինչպէս կամենաք սկսեցէք, նրանք միշտ միևնոյն եղանակով խօսել կսովորեն և ձեր բոլոր փիլիսոփայական դատողութիւնները վերին աստիճանի անպէտք կլինեն:

178. Ամենից առաջ երեխաներն ունին, յայպէս ասած, իրենց մանկական քերականութիւնը, որի համաձայնութիւնն աւելի ընդհանուր կանոններ ունի, քան թէ մերը և եթէ աւե-

լի ուշադրութիւն դարձնենք, կգարմանը այն ճշտութեան վրայ, որով նրանք որոշ նմանութիւնների են հետեւում, թէև հարկաւ շատ սխալներով, բայց կանոնաւոր. սրանք ալբի են ընկնում իրենց բրտութեամբ, կամ թէ՛ որովհետև սովորական խօսակցութեան մէջ ընդունելի չեն, եւ մի անգամ լսեցի, թէ ի՞նչպէս մի հայր իր որդու հետ սաստիկ կռուեց, երբ վերջինս ասաց. Mon pere, irai je-t-y? Բայց տեսնում էք, որ երեխան աւելի լաւ էր հետեւել նմանութեանը, քան թէ մեր բերականները. քանի որ նրանք ասում են vas-y, Ինչո՞ւ չպէտք է ասելիւ irai-je-t-y: Բացի դրանից՝ նկատեցէք թէ ի՞նչպիսի ճարտարութեամբ նա խոյս է տուել ձայնաւորների միմեանց հանդիպելուց irai-je-y-ից կամ y irai-je-ից, Մի՞թէ խեղճ երեխան յանցաւոր է որ մենք y որոշող մակբայն, չգիտենալով թէ ինչ անենք, անիրաւացի կերպով հեռացրել ենք խօսքի միջից, Անտանելի ուսուցումն և բոլորովին աւելորդ աշխատանք կլինի՝ երեխաների այդպիսի լեզուական փոքրիկ սխալներն ուղղելը. Ժամանակով դրանք հարկաւ իրենք իրենց կուղղուեն: Միայն թէ՛ դու նրանց հետ միշտ ուղիղ խօսիր և ուշադրութիւն դարձրու այն հանգամանքի վրայ, որ նրանք ուրիշի հետ աւելի սիրով չլինեն, քան քեզ հետ և կարող ես վստահ լինել, որ աննկատելի կերպով նրա լեզուն քոնի համեմատ կուղղուի, առանց քո պարտաւանքի:

179. Մի բոլորովին այլ նշանակութիւն ունեցող վեղճումըն էլ, որի առաջը նոյնպէս հեշտութեամբ կարելի է առնել, այն է, որ սաստիկ շտապում ենք երեխաներին խօսել սովորեցնելու. կարծես վախենում ենք, որ նրանք չկարողանան իրենք սովորել. Այս անշնորհք շտապելով մենք ուղիղ մեր ցանկացածի հակառակ նպատակին ենք հասնում. նրանք աւելի ուշ և աւելի անկանոն են խօսում. այն արտաքոյ կարգի ուշադրութիւնը, որով մենք նրանց ամեն մի խօսքը լսում ենք, միջոց չէ տալիս նրանց աւելի պարզ արտասանելու և երբ դեռ հազիւ են կարողանում բերանները բանալ՝ ըմբռնում են մի քանի սխալ արտասանութեան և խօսելու մի այնպիսի եղանակ, որ խօսքը համարեա թէ անհասկանալի է դարձնում:

180. Եւ շատ եմ ապրել գիւղացիների մէջ և երբէք չեմ լսել, որ երբ եկեց նրանցից մէկը կակազեր, ոչ տղամարդ, ոչ աղջիկ և ոչ տղայ. Ինչի՞ցն է այս. Արդեօք գիւղացիների գործարաններն այլ կերպ են կազմուած քան մերը, Ո՛չ, բայց նրանք այլ

կերպ են վարժուում Իմ պատուհանի դիմացը հողի մի կոյս-
կալ, որի վրայ հաւաքուում են տեղական երեխաները և խա-
ղում Թէև նրանք բաւականին հեռու են ինձնից, բայց և այն-
պէս պարզ որոշում եմ նրանց բոլոր խօսակցութիւնը և այդ
հանգամանքից բաւականին օգտուում եմ այս գրքի համար:
Ամեն օր սխալուում եմ՝ նրանց տարիքի վերաբերմամբ, լսում
եմ տասնամեայ երեխաների ձայնը, նայում եմ և տեսնում ե-
րեք չորս տարեկան մանկանց պատկերն ու դիմագծերը: Այս
փորձը միայն ես չեմ անում, երբ քաղաքից ինձ մօտ հիւրեր
են գալիս, նրանց էլ հարցնում եմ այդ մասին և նրանք էլ
նոյն սխալմունքի մէջ են ընկնում:

181. Այդ սխալմունքի պատճառն այն է, որ քաղաքում
ապրող մանուկները, մինչև հինգերորդ կամ վեցերորդ տարին
մեծանալով սենեակում կամ դաստիարակչուհու փեշի տակ,
հենց որ մի փոքր մոմոան, նրանց միտքը կհասկացուի, հենց
որ նրանք շրթունքները շարժում են, շրջապատողները մեծ ջանք
են գործ դնում նրանց լսելու: շրջապատողները խօսքեր են արտա-
սանում նրանց համար և նրանք էլ կրկնում են վատ արտասա-
նութեամբ, այսպիսով երեխաների ասածներն աւելի գուշակ-
ւում քան թէ լսւում և հասկացւում են:

182. Գիւղերում բոլորովին այլ է, Գեղջկուհին շարունակ
իր զաւակի մօտ չէ լինում և այդ պատճառով վերջինս ստիպ-
ուած է լինում բոլորովին պարզ և բարձր խօսելու այն, ինչ
որ մայրը պէտք է լսի, երեխաները ցրուելով դաշտում ու հօրից,
մօրից և ուրիշ երեխաներից հեռու լինելով՝ սովորում են հե-
ռուից իրենց ասածը հասկանալի դարձնել և իրենց ձայնի ոյ-
ժը չափել՝ համեմատ այն տարածութեան, որ գտնւում է խօ-
սողի և լսողի մէջ: Այդպիսով նրանք սովորում են նպատակա-
յարմար կերպով ճիշտ արտասանել և ոչ թէ մի քանի ձայնա-
ւոր հնչիւններ լցնել ուշադիր դաստիարակչուհու ականջը:
Այո՛, երբ գիւղացի մանկանը մի բան ենք հարցնում, գուցէ
ամաչելով չէ պատասխանում, բայց ինչ որ ասում է, պարզ է,
այն ինչ քաղաքում դայեակը պէտք է իբրև թարգման ծառա-
յէ երեխային, որովհետև առանց դայեակի օգնութեան մենք
ոչինչ չենք հասկանալ թէ նա ի՞նչ է ատամների տակը մըռ-
մուում*)

*) Իայց ոչ առանց բացառութեան, այն երեխաները, ո-

183. Մեծանալով՝ տղաները դպրոցներում պէտքէ ազատուէին այդ թերութիւնից, աղջիկները՝ վանքերում և խնայպէս այդպիսիներն առհասարակ աւելի պարզ են խօսում, քան շարունակ իրենց հայրական տանը դաստիարակուողները: Սակայն գիւղացիների պէս պարզ խօսելու համար նրանց արգելք է լինում շատ բան անդիր սովորելու և սովորածը բարձրաձայն ասելու սովորունքը, որովհետև անգիր սովորելու ժամանակ նրանք վարժուում են անհոգութեան՝ անփոյթ և վատ արտասանութեան: Իսկ սովորածն ասելու ժամանակ՝ աւելի վատ. նրանք մեծ ջանքով են բառերը կապակցում և վանկերը դէս ու դէն բաշքշում. երբ յիշողութիւնը դաւաճանում է, անկարելի է, որ լեզուն էլ չկակազի: Այդպէս են առաջանում արտասանութեան սխալները և տարածում: Աւերջը կերեւայ, որ իմ Էմիլն այդ թերութիւնները չունի կամ թէ այդ կերպով չէ ստացել:

184. Ես համաձայն եմ, որ ամբոխն առհասարակ և գիւղացիները դրա հակառակ թերութիւնն ունեն. նրանք համարեա միշտ աւելի բարձր են խօսում, քան թէ հարկաւոր է, ճիշտ արտասանելու պատճառով նրանք շատ բիրտ ու կոշտ կերպով են յօդաւորում բառերը, ծանր շեշտ ունին, վատ են արտայայտում իրենց մտքերը և այլն:

185. Սակայն այդ չափազանցութիւնն ինձ շատ աւելի քիչ սխալմունք է թուում քան առաջինը, որովհետև խօսելու առաջին պայմանը հասկանալի լինելն է. ամենամեծ սխալն այն է, որ խօսում են՝ առանց հասկանալի լինելու: Ով կարծում է թէ շեշտադրութիւն չունի, իր խօսքերի վայելչութիւնն աւարտայայտութիւնը կորցնում է: Շեշտը խօսքի հոգին է, նրան զգացմունք և ճշտութիւն տուողը: Շեշտն աւելի քիչ է ստում, քան բառը, զուցէ այդ պատճառով են դրանից այդպէս վախենում նուրբ կրթութիւն ստացած մարդիկ: Ամեն բան միևնոյն

րոնց ասածները սկզբում ամենից քիչ են հասկացում, յետոյ յաճախ. երբ մի անգամ ձայները բարձրացնում են, խլացուցիչ աղաղակներ են յարուցանում: Բայց եթէ այդպիսի մանրամասնութեանց մէջ մտնէի, երբեք չէի կարող վերջացնել ամեն հասկացող ուսուցիչ պիտի տեսնէ, որ միևնոյն զեղծումից առաջացած թէ թերութիւնը ու թէ չափազանցութիւնը կօղղուի իմ առաջարկած մեթոդով: Վերջում բաւական, չափ երբեք— ինձ համար երկու անբաժան սկզբունքներ են: Սթէ առաջինը հաստատ է, երկրորդը անհրաժեշտ կերպով առաջանում է դրանից:

եղանակով ասելու սովորութիւնից առաջանում է աննկատելի կերպով ուրիշներին արհամարհելու սովորութիւնը: Հեշտագրութիւնը լեզուից դուրս ձգելով՝ արտասանութեան մէջ առաջացած ծիծաղիլի արուեստական և նորաձեւութեան ենթարկուող բաղաբաղարական ձևեր, որ առանձնապէս նկատելի են պալատական երիտասարդների շրջանում: Այդ արուեստական խօսակցութիւնը և դիրքն անհաճելի ու զզուելի է դարձնում ամեն մի ֆրանսիացու հանդիպումն ուրիշ ազգերի հետ առհասարակ: Փոխանակ խօսքերը շեշտելու, նրանք ուղղում են պատկեր ձևացնել: Այդ կերպով ոչ ոքին չի կարելի գրաւել:

186. Լեզուի այս բոլոր մանր սխալները, որոնցից ուղղում ենք ապառ պահել երեխաներին, ինքն ըստ ինքեան ոչինչ են. ամենամեծ գիւրութեամբ կարելի է դրանց առաջն առնել կամ թէ ուղղել բայց այն սխալները, որ մենք ենք նրանց սովորեցնում նրանց խօսքը թոյլ, մութը ու տարտամ դարձնելով և շարունակ նրանց շեշտագրութիւնն ուղղելով և կամ թէ նրանց արտասանած բոլոր բառերը քննադատելով՝ անուղղելի են մընում: Այն մարդը, որ միայն նախասենեակում է խօսել սովորել չի կարող իր խօսքերը լսելի անել ամբողջ զօրագնդին և ապստամբութեան ժամանակ հազիւ թէ կարող լինի ժողովրդի վրայ ազդեցութիւն ունենալ: Ամենից առաջ երեխաներին սովորեցրէք տղամարդկանց հետ խօսելու, կանանց հետ նրանք արդէն կարող կլինին խօսել երբ կարիք լինի:

187. Եթէ դուք ձեր զաւակներին գիւղում կրթէք՝ կատարեալ գեղջկական սովորութեամբ, նրանք աւելի հնչիւն ձայն կունենան, չեն իւրացնի քաղաքացի երեխաներին յատուկ անորոշ թոթովանքը. նրանք չեն իւրացնի նոյնպէս գիւղացիների արտայայտութեանց ձևն ու եղանակը կամ առ սակաւն գիւրութեամբ կթողնեն, եթէ ուսուցիչը, որ նրանց ծնուելու օրից հետներն է ապրում, իր խօսակցութեան ճշտութեամբ օր ըստ օրէ գիւղական լեզուի առաջն առնի: Եւթիւր նոյնպէս զուտ ֆրանսերէն կխօսի, ինչպէս որ ես եմ խօսում, բայց ինձնից աւելի որոշ կխօսի և շատ աւելի լաւ կյօդաւորէ:

188. Եթէ մանուկն ուղղում է խօսել, պէտք է միայն բառերը լսէ, որ կարող է հասկանալ և միայն այն բառերը խօսէ, որ կարող է յօդաւորել: Այդ նպատակով նրա արած ջանքերն առիթ կտան նրան նշյն վանկը կրկնելու՝ իրրե թէ ուղղում է վարժուել աւելի պարզ արտասանելու համար: Եթէ սկսի

կակաղել, շատ մի աշխատի գուշակելու՝ թէ ի՞նչ է ասում, Երևոս-
քերը միշտ լսեցնել տալու ցանկութիւնը նոյնպէս մի տեսակ իշխա-
նութեան տենչանք է, իսկ երեսան իշխանութիւն չպէտք է
բանեցնէ ո՛չ մի բանում: Բաւական կլինի, եթէ գու ամենայն
ուշագրութեամբ ամենակարեւորները լսես. մնացածի համար
իր ասածները հասկանալի դարձնելը՝ նրա գործն է: Առաւել
ևս չը պէտք է պահանջներ երեխայից, որ խօսէ, ինքն իրեն
էլ կխօսի, երբ դրա օգուտը տեսնի:

189. Յամենայն դէպս նկատելի է, որ ուշ խօսել սկսող-
ները, երբէք այնպէս որոշ չեն խօսում, ինչպէս միւսները. բայց
նրանց լեզուի գործարանը նրա համար չէ մնում ծանրաշարժ,
որով հետեւում են սկսել խօսել, ընդհակառակը նրանք ուշ են սկը-
սում խօսել, որովհետեւ ծանրաշարժ գործարանով են աշխարհ եկել
եթէ այդպէս չը լինէր, ինչո՞ւ պէտք է նրանք աւելի ուշ խօ-
սէին, բան ուրիշները: Եթէ նրանք խօսելու աւելի քիչ առիթ
ունին և կամ թէ աւելի քիչ են խրախուսւում բան ուրիշնե-
րը: Ընդհակառակը, հենց նկատում ենք նրանց յետ մնալը
թէ չէ, մեր հոգացողութեամբ աւելի ևս առիթ ենք տալիս
նրանց կակաղելու. և այս վատ գործադրուած աճապարանքը
կարող է օգնել նրանց լեզուի անորոշ դառնալուն, որ առանց
շտապելու և խաղաղ կերպով՝ կարող էր կատարելագործուել:

190. Այն երեսանները, որոնց շատ են ստիպում խօսելու,
ոչ ժամանակ ունին կանոնաւոր արտասանութեան սովորելու,
ոչ էլ կանոնաւոր հասկանալու իրենց ասելիքը. այն ինչ եթէ
ժամանակ տանք նրանց, որ վարժուեն՝ վանկերին հետըհետէ
որէն նշանակութիւն տալու, որ կարելի է ճանաչել նրանց
գիմագծերի շարժողութիւններից, և խօսելուց առաջ մեր արտա-
սանած բառերը լսելու, այն ժամանակ հասկանալով կխօսէին: Եթէ
չենք ստիպում նրան բառեր գործածել, նրանք առաջ դիտում են,
թէ մենք ի՞նչ նշանակութիւն ենք տալիս բառերին և յետոյ
են իւրացնում:

191. Երեսաններին շտապով, ժամանակից առաջ խօսեցնել
տալու ամենամեծ զեղծումն է այն չէ, որ նրանց հետ զրուցած
առաջին խօսակցութիւնները և նրանց ասած առաջին խօսքերը
միտք չունին, այլ այն, որ դրանք մեր ըմբռնողութիւնից տար-
բեր միտք ունին, բայց մենք չենք նկատում այդ մեղ այնպէս
է թւում, թէ նրանք ճիշտ պատասխաններ են տալիս, բայց
իսկապէս մեղ հետ խօսում են՝ առանց մեղ հասկանալու կամ

Թէ մենք էլ չենք հասկանում նրանց ասածները, Այդպիսի սը-
խալ հասկացողութեանց պէտք է վերագրել սովորաբար այն
հանգամանքը, որ երբեմն մեզ զարմանք են պատճառում նրանց
խօսքերը, որոնց բոլորովին ուրիշ մտքեր ենք վերագրում և
ոչ թէ նրանց իսկական կապակցութիւնն ըմբռնում: Իմ կար-
ծիքով մենք շատ անտարբեր ենք վերաբերում երեխաների
իսկական նշանակութեանը և այդ է պատճառը նրանց առաջին
սխալմունքների. այդ սխալմունքներն ապագայում աղբեղու-
թիւն են ունենում նրանց ամբողջ կեանքի ուղղութեան վրայ:
Հարունակութեան մէջ շատ անգամ առիթ կունենամ ասած-
ներս օրինակներով լուսարանելու:

192. Երեկայի բառերի պաշարն ուրեմն պէտք է սահմա-
նափակել միայն ամենակարեւորներով: Հատ ձեռող հանգամանք
կլինի, եթէ նա աւելի բառեր գիտենայ՝ բան գաղափարներ
և եթէ աւելի շատ բան գիտենայ ասել՝ բան թէ մտածել, Ես
կարծում եմ, որ գիւղացիների քաղաքացիներից աւելի առողջ
գատողութիւն ունենալու պատճառներից մէկն էլ այն է, որ
առաջինների բառերի պաշարն աւելի սահմանափակ է: Նրանք
սակաւաթիւ գաղափարներ ունեն, բայց շատ լաւ են դրանց
միմեանց հետ յարաբերութեան մէջ դնում:

193. Մանկանց զարգացման առաջին քայլերը համարեալ
բոլորն էլ միանգամից են տեղի ունենում: Համարեալ թէ միա-
ժամանակ երեխան սովորում է խօսել, ուտել և ման գալ: Այդ
է իսկապէս նրա կեանքի առաջին հատուածը: Դրանից առաջ նա
աւելի չէ, բան ինչ որ էր իր մօր արգանդում, որովհետեւ ոչ
զգացմունք ունի, ո՛չ գաղափար, այլ հազիւ միայն զգայու-
թիւն. նա ինքն էլ իր սեպհական գոյութեան մասին տեղե-
կութիւն չունի:

Vivit, et est vitae nescius ipse suae *):

¹ Ըպրում է, բայց այնուամենայնիւ ինքն էլ հաղիւ
է զգում, որ ապրում է»: